Պարույր Սևակ

Անհաշտ մտերմություն

4

III

Երազիկը ահա եկավ:
Մի շաբաթ էր, ինչ նա չկար.
Գնացել էր նա Երևան:
Կարոտել էր Արան սաստիկ,
Երազում էր, որ շուտ մարդիկ
Խոսեն, գնան իրենց բանին,
Որ սիրածից կարոտն առնի:
Երազն հանկարծ դարձավ նրան.
-Դու այստե՞ղ ես, ո՞նց թե, Արա:
Գիշերն այստեղ ի՞նչ գործ ունես:
Ձայն չհանեց Արան մի պահ.
-Դու փոխանակ դաշտում քնես,
Հոտն ես քշել սար ու ձորով,
Բերել լցրել արխաջի մեջ:
Ո՞վ է ասել, թույլ տվել, ո՞վ:
Ի՞նչ ես լռել, խոսիր, ինչի՞,
Եվ հայտնի է դա Մկրտիչին…

Պատասխանը Արան կտար,
Բայց ոչ այստեղ, այս մարդկանց մեջ:
Ինչո՞ւ Երազն իրեն դիմեց
Նրանց առաջ այդպես օտար,
Թշնամական եղանակով,
Ինչո՞ւ այդպես անսիրտ վարվեց:
Եվ ջահելը վիրավորվեց,
Կարծես զարկվեց սուր դանակով…
Երրորդ օրն էր, ինչ նա քարի,
Ձոր ու սարի, ցրտի միջով
Իր հոտի հետ յուրդ էր գալիս՝
Հոգում հույսի, կարոտի ծով,
Թե միգուցե իր սիրելին
Դարձել է ետ: Դեռ ավելին՝
Երազում էր, որ նա երբ գա,
Իրեն շոյված ու լավ կզգա,
Որ իր Արան չի դիմանում,
Յուրդ է գալիս, սար չի մնում,
Որ շուտ տեսնի իր Երազին:
Մինչդեռ խնդրեմ, ահավասիկ…
Էլ ի՞նչ ասի, էլ ի՞նչ խոսի:
-Իսկ դու, Հեղուշ, իբր վարիչ
Ի՞նչ ես արել,-խոսեց նորից
Երազիկը,-չլինի՞ թե
Դու էլ բացի քո կովերից
Ուրիշ բանի չես խառնվում,-
Եվ Երազը նրան վերից
Մինչև ներքև այնպես չափեց,
Կարծես նրան փոխված գտավ:
-Չէ՛, ջա՛նս, չէ՛,- և Հեղինեն

Իմաստալից՝ աչքը ճպեց,-
Դե ես՝ոնց որ անպոչ գդալ,
Այս անգամ էլ մեջտեղ մտա,
Խառնվեցի այս անգամ էլ…
Եվ նա լռեց խորհրդավոր:
Դե Հեղուշը ախր չէ՞ որ
Արային էր պատին գամել,
Բարկացել էր.-Տո՛, անգդա՛կ,
Ի՞նչ է, ուրիշ տեղ չգտա՞ր,
Որ հոտը միշտ յուրդ ես բերում,
Տղամա՞րդ ես, թե չէ տղա…
Սակայն հիմա, երբ որ տղան
Վատ դրության մեջ էր դրվել,
Հեղուշն ուզեց այլ կերպ վարվել:
Եվ որպեսզի կանանց առաջ
Տղան շատ չընկարմրատակի,
Տվեց Հեղուշը կատակի.
-Մեղավոր է այստեղ Արտոն,
Որ ամեն օր գառան հոտով
Մթնեց թե չէ՝ տուն է գալիս
Եվ դրանով օրինակ տալիս
Մեր ջահել ու անփորձ հովվին:
Բայց դե ոչինչ. այսուհետև
Նա կհիշի, որ փուչ Արտոն
Գառնարած է, ինքը՝ հովիվ,
Եվ որ իրեն չի կարելի
Հոտը քշել ու սարերից
Ֆերմա բերել:
-Գլխիդ արև,-
Իսկույն Արտոն է մեջ մտնում,-

Դու մեզ ո՞նց ես համեմատում:
Որտե՛ղ Արտոն, որտե՛ղ Արան:
Նա հովիվ է, ես՝ գառնարած:
Այս՝մեկ: Հետո՝ կա և «երկու»,
Շատ կարևոր ու մեծ «երկու»:
Նա՝ ամուրի ջահել տղա,
Իսկ ես՝ Արտոս, կնիկ ունեմ:
Ես բացի այդ՝ ինչքան սիրեմ,
Նույնքան պիտի կեղծավորեմ:
Լավ մտածեք, կատակ հո չի.
Ես՝ գառնարած, վարիչ է նա,
Ես՝ շարքային, հերոս է նա,
Իսկ թե հանկարծ թողնի փախչի՞,
Գառնարածին թողնի մենա՞կ…
Դրա համար ամեն գիշեր
Ստիպված եմ հոտս քշել
Բերել ֆերմա և ողջ գիշեր
Սիրո քնքուշ խոսքեր ասել
Իմ Հեղուշին,
Իմ Անուշին:
Իսկ դու, Արա,
Այ ավարա,
Դու ի՞նչ ունես: Չլինի՞ թե
Դու էլ ինչ-որ «Հեղուշ» գտել,
Նրա համար քո ոչխարի
Հոտն ես քշում փափուկ սարից,
Բերում հանձնում խիճ ու քարին
Թե էդպես է, ասա նրա՝
Այդ «Հեղուշ»-ի անունը մեզ,
Որ գործը տանք ժողդատարան:

Եվ թափանցիկ այդ ակնարկից
Այրվեց դեմքը Երազիկի:
Ծիծաղեցին տարեց կանայք,
Հետո՝ նոր խոսք ու նոր հանաք-
Մինչև Արտոն գտներ էլի
Ինչ-որ խոսքեր ծիծաղելի…

IV

Երբ ցնդեցին մշուշ ու մեգ,
Արոտ ելան հոտ ու նախիր,
Եվ արևի կիզող վախից
Ծերպերի մեջ մտավ քամին,
Նախաճաշի տաքուկ ժամին
Մկրտիչն ու Կարոն գյուղից
Ձիեր նստած բարձրացան վեր՝
Եկան ֆերմա:
-Տիրուհինե՛ր,
Բարով տեսանք: Ի՞նչ եք անում,
Ի՞նչ քեֆի եք,-ժպտաց Կարոն:
-Բարո՛վ եկաք, հազա՛ր բարով,
Դե ապրում ենք, գործ ենք անում,
Ամեն մեկըս իրեն բանին:
-Կաթ ենք խմում, ուտում պանիր:
-Իսկ ի՞նչ կասեք, թե այսօր մենք
Փոքրիկ ժողով հրավիրենք
Կանաչի մեջ ու ծաղկունքի:
-Որ եկել եք, դե համեցեք:
-Միայն՝ մի քիչ հանգստացեք,
Մինչև ցած գան իրենց հոտով

Հովիվները:
Մի ժամ հետո
Եկան նաև Արան, Արտոն-
Գառնարածներ, նախրորդ, հովիվ,
Եվ լեռնային մարմանդ հովին,
Ծաղկունքի և կանչի մեջ
Նիստը բացված հայտարարեց
Եղյան Կարոն՝ բրիգադիր
Եվ քարտուղարը պարտկոմի:
-Այսօր ունենք մի լուրջ խնդիր,
Եվ սպասում եմ ձեր կողմից
Նույնքան էլ լուրջ վերաբերմունք:
Հարցը այսօր մեր հոտերի
Այսպես ասած՝գիշերային
Արոտին է վերաբերում:
Թե չենք ուզում խայտառակվել
Պարտիայի և երկրի առաջ.
Թե ուզում ենք բազմապատկել
Նվաճումներու ձեռք բերած,
Անհրաժեշտ է կազմակերպել
Գիշերային կարգին արոտ:
Լոկ այսպիսով մենք բարձր բերք
Երկրին կտանք:
Նստեց Կարոն,
Ու պարտկոմի քարտուղարին
Մկրտիչը փոխարինեց
Եվ իր կողմից էլ ավելի
Մանրամասն բացատրեց:
Հետո Հեղուշը ձայն խնդրեց,
Եվ Երազը, Արտոն, Արան.

Ամեն մեկը խոսողներից
Ինչպես հարկն է հարցը սրեց:
Միայն տարեց չոբան Սողոն
Թերահավատ վիզը ծռեց…
Գիշերային միջադեպից
Վիրավորված ու խռովկան՝
Արան սիրած իր աղջկան
Մտքում ներեց՝ հասկանալով
Իր սխալը: պետք էր եղել
Կազմակերպել մթնով արոտ,
Այնինչ ինքը չոր, քարքարոտ
Եվ հոգեհան ճանապարհով
Հոտն է քշել, բերել օթա:
-Այ քեզ ջահել, գիտուն չոբան,
Իսկ ես քեզ հետ հույս եմ կապել,-
Մկրտիչն էր նրան կպել
Ոչ թե գոռալ, բարկանալով,
Այլ մեղմորեն ու հաշտարար:
-Պետք է գործել հասկանալով,
Լավ մտածել է հարկավոր,
Իսկ դու, Արա…
-Դե լա՛վ, քավոր:
Ներողություն խնդրեց Արան,
Չորացնելով քրտինքը տաք:
-Ահա քեզ ինչ խորհուրդ կտամ,-
Մկրտիչը ասաց նրան,
Ձեռքը դրած նրա ուսին:
-Լա՛վ մտածիր դու այս մասին:
Ինչ որ պիտի ասեմ ես քեզ,
Կատարում եմ կյանքում և ես,

Այդ մտքով եմ առաջնորդվում
Յուրաքանչյուր քայլափոխիս:
Եվ հասարակ, պարզ է նա խիստ:
Հարցը այս է: Ասենք թե դու
Ոչ թե այստեղ ես աշխատում՝
Այս հեռավոր խուլ սարերում,
Այլ Մոսկվայում՝ հենց Կրեմլում:
Աշխատում ես ու դու գիտես,
Որ քո ամեն, ամեն քայլին
Աշխատանքիդ, մտքիդ անգամ
Հետևում են, դիտում նրանք՝
Մեր պետության, մեր պարտիայի
Գործիչները:
Դու ո՞նց կզգաս,
Ինքդդ դատիր, երբ իմանաս,
Որ ժպտում են քեզ նայելիս,
Երբ որ քո լավ գործն են տեսնում
Եվ նայում են դժգոհությամբ,
Երբ արածդ դուր չի գալիս…
Այ, այս միտքը քանի տարի
Հետևել է ինձ անդադար:

V

Մայրամուտին մի ճոխ արև
Ծաղկածիծաղ լեռ ու հանդին
Փայլ է տվել ու զարդարել:
Այնպես լուռ է լեռնաշխարհում,
Այնպես խաղաղ, այնպես հանգիստ:
Աղմկում է միայն առուն,

Որ բխելով ցուրտ ծմակից
Թավալվում է դեպի ներքև,
Դեպի ձորը:
Ջրվեժի տակ,
Հեղինեն է լվացք անում:
Առավոտյան, իր ցանկությամբ,
Չորս տղային գյուղ է տանում,
Որ արտերում հասկ հավաքեն:
Տղաները խաղ են անում,
Վազվզում են վերև-ներքև:
Մայրն ուզում է ուրախ երգել,
Բայց հիշում է Մկրտիչին,
Որ փոխվում է երգը ճիչի:
Մկրտիչը հիշել տվեց,
Որ Հեղուշը լուրջ երդվեց
Կոլվարչության անցյալ նիստում,
Թե բերվելիք այն բրդատու
Ոչխարների յուղ ու կաթի
Ողջ պակասը ինքն է տալու
Իր կովերի բրիգադից:
Այն օրվանից, երբ որ սարում
Գիշերային արոտը նոր
Սովորություն դարձավ բոլոր
Հովիվների հոտի համար,
Խոտը կարծես դարձավ կաթոտ,
Եվ ոչխարները բրդատու
(Կոչում էին որոնց «բրդոտ»)
Կաթ տվեցին այնքան, որքան
Մաքիները սովորական:
Բայց դա հո չի՞ նշանակում,

Թե հաշիվն է արդեն մաքուր,
Եվ Հեղուշը արդեն տրված
Իր խոսքից է հրաժարվում:
Բարձր բերքի հարց է դրված,
Բանն էլ ոչ թե տված խոսքին,
Այլ դրան է վերաբերում…
Եվ հիմա նա տարուբերվում…
Նա հուզվում է ինչ-որ ներքին
Մի անհանգիստ խլրտումից:
Խորհո՞ւրդ հարցնել: Սակայն ումի՞ց:
Եվ ո՞րտեղից, ինչպե՞ս գտնել
Այն միջոցը, հնարը, որ
Պիտի դարձներ հնարավոր
Էլ ավելի շատ կաթ կթել
Իր կովերից:
Իսկ թե նորից
Այդ արոտը գիշերային
Նա տարածի և կովերի,
Այո, նաև նրանց վրա՞…
Այս միտքն այսպես կպավ նրան,
Որ լվացքը թողած կեղտոտ՝
Նա վազ տվեց Երազի մոտ:
-Գիշերային արոտն՝ արոտ,
Սակայն, Երա՛զ, այնպես չլինի,
Որ ծուռ հոնքը շինելու տեղ
Հանկարծ աչքն էլ տեղից հանի…
-Իսկ Միկիչին դիմե՞լ ես դու,
Չէ, եկ հիմա գնանք այնտեղ:
Մկրտիչը իր վրանի
Հովանու տակ, հենված այունին,

Լուռ կարդում էր, վերընթերցում
Ձմեռային իր կուրսերի
Տետրակն երը:
-Ի՞նչ ես կարծում,
Ախպեր Միկիչ, կովերին էլ
Այդ արոտը գիշերային
Գուցե օգնի կաթի հարցում:
Մկրտիչը աչքը ճպեց,
Լայն ճակատը ափով շփեց:
Նա լավ գիտեր՝ տափաստանում
Կովերին էլ գիշերային
Արոտի են վաղուց տանում:
Նույնն անում է Կալինինոն:
Սա, իհարկե, գյուտ չէ մի նոր:
Բայց… հենց բանը այդ «բայց»-ումն է:
Այստեղ փոքրիկ թերացումն էլ
Մեկ էլ տեսար կանգնեցրրեց
Ֆերման կոտրած տաշտի առաջ:
Պետք է հիշել նախ և առաջ,
Որ մինչ այնտեղ՝ ստեպներում
Տափարակ է, հարթ է, փափուկ,
Մեզ մոտ՝ այստեղ, այս լեռներում
Ճամփան խաղում տափուկ-տափուկ,
Կախ է ընկնում մերթ քարափից,
Մերթ վիհերի խորքն է չափում,
Մերթ, կըտրված ասես կապից,
Գլորվում է ձորակն ի վար:
Եվ այդ քարոտ ու քարքարոտ
Ճամփաներով քշել տավարն
Ու անթափանց մութ գիշերով

Տանել արոտ ու ետ բերել,
Քարափներից ցած գլորել
Եվ կամ հանձնել գելի բերա՞ն…
Չէ, այդ դեպքում արդեն նրանց
Հարկավոր են ոչ թե երկու,
Այլ չորս կամ հինգ նախրապահներ,
Մի քանի շուն, որ լավ պահեն
Հոտի նման և նախիրին:
Հետո՝ երեք թե չորս անգամ
Նախիրն հանձնել խիճ ու քարին,
Քշել արոտ, այնտեղից՝ ե՞տ:
Կովերն հենց այդ ճանապարհին
Ունենան էլ թե կաթի գետ,
Ճամփին պիտի զրկվեն կեսից:
-Ախպեր Միկիչ, մի սպասի՛ր:
Իսկ եթե մենք, խոսքիս լսիր,
Իսկ եթե մենք…
Եվ Հեղինեն
Գյուտ արածի նման՝ հանկարծ
Թռավ տեղից:
Իսկ եթե մենք
Օրն այլևս երեք անգամ
Մեր կովերը էլ չքշենք
Արոտներից բերենք ֆերմա՞:
Իսկ եթե մենք ինքներս հիմա
Գնանք սար ու մեր կովերին
Այնտեղ կթենք ու այսպիսով
Ճամփին կորչող կաթը շահենք
Ու վարչության նիստում տված
Մեր խոստումը պատվով պահե՞նք…

Մկրտիչի բեղոտ շուրթին
Այն ժպիտը լայն ալիքվեց,
Որ ուսուցիչն աշակերտի
Աչն զգալիս է ունենում
Ու մտքի մեջ հպարտանում.
-Կեցցե՛ս, Հեղո՛ւշ, ես իմ հոգին,-
Միկիչն ասաց գորովագին.-
Մենք կարող ենք իրոք կթել…
-Ի՞նչ է, կաթի հա՞նք եք գտել,
Խեթեց Արոտն նա (այդ պահին
Իր վեցերորդ չար տղայի
Արյունոտված մատն էր կապում
Փաթաթանով, վռազ-վռազ,
Ու հորդորում.
-Ոչի՛նչ, բալաս,
Կմեծանաս, կմոռանաս:
Մինչև օրը հարսանիքիդ
Ժամանակ կա դեռ ահագին):
-Զբաղեցրու դու տղային,-
Վրա բերեց Հեղուշն անփույթ,-
Հանք չենք գտել, ա՛յ մարդ, նայի՛ր,
Կաթի գետ ենք ձեռքով կապում,
Սպիտակ գետ՝ փրփո՛ւր-փրփո՛ւր,-
Եվ Հեղուշը տեղում պարեց:
Իսկ սրամիտ, ուրախ Արտոն
Նայեց կնկան, վրա բերեց.
-Տե՛ս, կաթով է կինս հարբում,
Ես՝ արաղով,
Տղաս՝ խաղով,-
Ի՞նչ եմ ասել՝ տուն ենք համա՛,-

Ու նա կրկնեց կնոջ նման.
-Սպիտակ գետ՝ փրփո՛ւր-փրփո՛ւր:
-Դու իզուր ես հանգեր կապում,-
Միկիչն ուրախ դիմեց նրան,-
Ասենք՝ դու հենց կապիր հանգեր,
Իսկ մեզ, Հեղո՛ւշ, պետք է՝ հանգել
Խելոք ու ճիշտ լուծման հարցի:
Երբ կթվորներն հավաքվեցին
Նույն վրանի դռան առաջ՝
Մկրտիչը հայտնեց նրանց,
Որ այսուհետ պետք է նրանք
Երկու անգամ կիթը դաշտում
Կազմակերպեն:
-Մենք հո կորանք:
Բացականչեց ինչ-որ կթվոր,
Ճիշտ է, փոքր-ինչ հասակավոր,
Սակայն առողջ ու ամրակազմ:
Հեղուշին էլ այդ էր պակաս,
Նրան էլ այդ էր հարկավոր.
-Խանում-խաթո՛ւն, իմ հարգևո՛ր,
Թե չես կարող կթվոր դառնալ,
Խնդրեմ վաղը վերադառնաս
Գյուղում դառնաս կալվո՛ր, քաղվո՛ր՝
Ի՞նչ որ սիրտդ կկամենա:
Այնտեղ արդեն լավ կիմանաս,
Թե քրտինքդ ուր կհասնի:
Չե՞ս ամաչում բա դու, Ազնի՛վ,-
Եվ Հեղուշը տոնը փոխեց,
Ոչինչ չունես քեզ խանգարող,
Որ չոփ շինես աչքս կոխես:

Ինձ նայելիս չե՞ս ամաչում:
Ձեռքիս, գրկիս՝ յոթ երեխա
Կամ կաթնակեր, կամ չար, կամ խակ…
-Մի՛ մոռացիր ութերորդիդ,-
Ծիծաղելով ասաց արտոն
Ու ցույց տվեց իրեն մատով:
Հեղուշն ասես չնկատեց
Ու նույն տոնով շարունակեց.
-Յոթ երեխա, հետն էլ՝ վարիչ,
Հետն էլ իմ իսկ հոժար կամքով
Նաև կթվոր… Ի՞նչ է, քարի՞ց,
Չէ, մորից եմ ծնվել քեզ պես:
Եթե դատենք բոլորս էդպես,
Ո՞ւր կգնա, ո՞ւր կհասնի:
Չես մտածում բա դո՞ւ, Ազնի՛վ:
Մկրտիչը վախենալով
Որ կհասնեն կանայք հեռու,
Ինքն օգնության ուզեց հասնի:
-Մի քիչ ծանր է, բայց դե, Ազնիվ…
Եթե մի քիչ…
-Դե լա՛վ, Միկիչ,
Բերանիցս խոսք էր թռավ,
Եվ Ազնիվը քաշվեց մի կողմ,
Սակայն հետո չհամբերեց
Եվ դիմելով Հեղինեին,
Խիստ տաքացած վրա բերեց.
-Սրա՛ն նայիր, զարմացըրե՛ց,
Ավետարան գլխիս կարդաց:
Բերանիցս խոսք էր՝ փրթաց.
Ի՞նչ է, ես մի անհասկացող

Լաչառ կի՞ն եմ կամ թե հիմա՞ր,
Որ դու, Հեղո՛ւշ, գլխիս հիմա
Եկար դարձար ագիտատոր:
Ե՛ս, իմացիր, խելքի՛ կտոր,
Ե՛ս, թող գլխիդ մի լա՛վ նստի,
Տասնյոթ թվի կոմունիստի
Կին եմ եղել, լա՛վ իմացիր,
Քեզնից էլ լավ եմ հասկանում…
-Ա՛խ, Ազնի՛վ ջան, էդ մի բանում
Մեղավոր է ողորմածիկ
Հայրս,-ասաց Արտոն տեղից,-
Տնաշենը թե իր տղին՝
Այսինքն ինձ՝ ձեր ծառային,
Շուտ տար արյուն, միս ու ոսկոր,
Ես էլ անշուշտ… Դե մի խոսքով
Կչկչաննե՛ր, հաշտվե՛ք, դե շո՛ւտ…
Եվ ծիծաղը իր հետ քշում
Ու տանում է գժտվածության
Ամեն մի հետք: Եվ հրճվագին
Ծիծաղում են թե մարդ, թե կին:
Իսկ Ազնիվը գորովագին
Երկու ձեռքով չանչ է անում
Արտոյին, որ պատի տակին
Լուռ նստել է, ձայն չի հանում
Եվ անծիծաղ՝ շուրջն է նայում,
Կարծես փնտրում այդ կատակի
Իրեն անհայտ հեղինակին…

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

I

Հակառակ է կարծես գնում
Լույս և մութի օրենքներին
Ամռան գյուղը: Դեռ կեսօրին
Լռությունն է կես-գիշերվա
Կարծես այնտեղ թագավորում:
Երբ խավարն է թևը փռում,
Իրիկվա հետ ծայր են առնում
Խոսք ու զրույց, աղմուկ ու վեճ:
Մարմրում են ձայներն անվերջ
Ու բորբոքվում են վերստին
Դռան առաջ մեծ պահեստի:
Ամեն հարկի, տանիքի տակ
Հնչում է խոսք, ծիծաղ, կատակ:
Իրիկնային ննջող քամին
Արթնանում է միանգամից,
Արթնանում է ու զով անում
Տապից այրված հող ու քամին:
Կարկաչում է նազով առուն,
Մեկ-մեկ իրեն դրսևորում
Սրա-նրա կանաչ մարգում,
Հետո կորչում մթին այգում:
Վարչությունում այդ նույն պահին
Մեկն իր աշխօրն է ստուգում
Ու հաշիվներ անում մտքում.
Ինչքան պիտի տանը պահի
Եվ ինչքանով նոր տան համար
Մահճակալներ գնի հարմար:
Մեկ էլ դիմում նախագահին

Եվ համոզել է աշխատում,
Որ իզուր են իրեն կալի
Պահակ կարգել: Ճիշտ չի գտնում.
-Ինչո՞ւ, ախպե՛ր, ինչո՞ւ պահակ
Չէ՛, փառք աստծո, աշխատունակ,
Առողջ մարդ եմ, ուրի՛շ գործ տուր
Եվ մի՛ անի ինձ խայտառակ
Գյուղի,
մարդկանց,
կնկաս առաջ…
Իսկ ակումբի արձակ բակում
Զահել-ջուհուլն է աղմկում:
Ետ են գալիս աշխատանքից՝
Կալից, հնձից ու ջրտուքից,
Հագնվում են պարզ ու մաքուր
Եվ շտապում ուղիղ ակումբ:
Ոմանք ներսի լայն դահլիճում
Զրուցում են կամ տաք վիճում:
Թերթ են կարդում ոմանք լռին
Բացատրում մյուսներին:
Այստեղ՝ թեքված իրար վրա,
Սպասելով իրենց հերթին,
Մի խումբ տղերք աղմկարար
Քիչ է մնում ջարդեն նարդին:
Այնտեղ՝ նույնպես ամբողջ մի խումբ
Հետևում է խաղին, սակայն
Լռուռ, մտազբաղ:
Ճերմակ արքան
Հակառակորդ զինվորների
Նոր հարձակման թափի առաջ

Կանգ է առել «մատի» դռան:
-Թագավորիդ արդեն, Հրանտ,
Հիտլերի բախտն է սպասում:
-Որ այդպես է՝ ուրեմն ապա
Թող որ լինի և ինքնասպան,
Ասում է նա և արքային
Մեջքի վրա շուռ է տալիս…
Իսկ կենտրոնից կամ շրջանից
Դասախոս է երբ որ գալիս,
Ջեկուցումից հետո սիրով
Պատասխաններ է երբ տալիս,
Եվ թվում է, որ դահլիճում
Բոլոր հարցերը վերջացան,
Եվս մեկի ձայնն է հնչում.
-Կխնդրեինք քեզ, ընկեր ջան,
Երկու խոսք էլ ասեիր մեզ
Դրությունից միջազգային:
Միշտ էլ՝ վերջում, միշտ՝ նույն պահին
Եվ միշտ՝ անկախ բուն թեմայից…
Եվ դասախոսն ակամայից
Ստիպված է հարցը հարգել
Ու լսում են.
-Մակի նոր կուրս…
Ողջ աշխարհը՝ երկու լագեր…
Վիետնամում մահ ու արյուն…
Անդրծովյան Ամերիկայում
Փնտրտուքներ նոր զենքերի,
Ջրածնային ինչ-որ գերռումբ…
Այդտեղ արդեն Դանել քեռին
Նստած տեղը չի համբերում

Ու գոչում է ձայնով ամբողջ.
Պետք է ասել էդ շան որդուն,
Թե՝ իզուր ես կարծում, որ դու
Կվախեցնես մեզ քո ռումբով
Ատամային…
(Կարծում եք դուք,
Ես թույլ տվի տառասխա՞լ.
Ո՛չ, կոչվում է հենց նա այդպես
Ատամայի՛ն)…
-Մենք էլ ախր
Սուր ատամներ շատ ենք տեսել
Ու ջարդել ենք, էն էլ ինչպե՛ս…
Զեկուցումից հետո նրանք
Դեռ ակումբից տուն չեն դառնում,
Եվ այս ծանոթ նյութի վրա
Մի տաք զրույց է ծայր առնում:
Սակայն այսօր…
Ո՞վ էր տեսել,
Որ զեկուցումը վերջանա
Եվ ոչ մի ձեռք չբարձրանա
Ու չհարցնի դասախոսին
Դրությունից միջազգային:
Բայց պատահեց, ահավասիկ:
«Ինչպես բաշխել կոլխոզային
Միջոցները դրամական»…
Աչքը չռել, լարել ականջ՝
Լուռ լսում են դասախոսին:
Եվ խոսում է նա այն մասին՝
Ինչպես որոշ կոլխոզներում
Դրամական եկամուտի

Ճնշող մասը զոհ են բերում
Շքեղ շենքեր կառուցվելուն,
Եվ դա՝ նույնիսկ այն ժամանակ,
Երբ որ չունեն ծատ հասարակ,
Բայց անհրաժեշտ նման բաներ,
Հարմարանքներ, պարագաներ,
Ինչպես դիցուք…
Մեկ էլ հանկարծ
Լռության մեջ հնչեց մի կանչ.
-Էլ ինչո՞ւ ես, ա՛յ տնաշեն,
Գնում հասնում հեռու-հեռու,
Եվ էնտեղից օրինակ բերում:
Հենց մեր գյուղը Սովետաշեն,
Մեր պալա՛տը…- ուստան գոռում
Ու նայում է Դանել քեռուն:
Կուլ չի գնում նա իր հերթին.
-Լամպի շուշա հո չես, ախպե՛ր,
Ի՞նչ ես ցցվել, տեղդ նստիր:
Բայց ձայները այս-այն կողմից
Նրա ձայնն են խլացնում.
-Չէ, ընկե՛ր ջան, այդ հարցերում
Նախագահից՝ մեր Թորգոմից
Ավելի լավ այլ դասախոս
Դու չես ճարի ողջ աշխարհում:
Իսկ Թորգոմը լուռ ու անխոս
Բեղն է կրծում ու համբերում:
Եվ թվում է՝ մի ողջ տարի
Եկավ անցավ, մինչև Կարոն
Ոտքի ելնում զանգ է տալիս.
-Դուք, ընկերնե՛ր, թույլ չեք տալիս,

Որ դասախոսը հարգելի
Շարունակի,
Այդ հո չեղա՛վ:
-Ինչո՞ւ չեղավ, ընկեր Եղյա՛ն,
Ես իմ հոգին, շատ լավ եղավ,-
Եվ աղմուկը ամեն կողմից
Խայթում է սիրտը Թորգոմի:

II

Գյուղը կարծես ամայացել,
Դատարկվել է կարծես հանկարծ,
Ոմանք հնձի են գնացել,
Ուրիշները՝ այգի կամ կալ:
Թե ճրագով անգամ ման գաս
Պարապ նստած մարդ չես ճարի,
Եվ շտապող Դանել քեռին,
Ամաչելով ինքն իրենից,
Որ կարող է թվալ պարապ,
Դարբնոց է հասնում արագ:
Ճանաչված է նա շատ վաղուց
Իբրև ամեն կարգի պահակ:
Մերթ այգի են հանձնում նրան,
Մերթ՝ բոստանը, պահեստը՝ մերթ,
Իսկ երբ արդեն ձյուն է –ձմեռ՝
Գոմերը հո միշտ կան ու կան…
Եվ այս անգամ,
Եվ այս տարի
Նշանակվել է մեր քեռին
Մեղվանոցի պահակ և կամ,

Ինչպես ինքն է սիրում կոչել՝
Իր նոր պաշտոնը՝ մեղվապահ:
(Նա՝ մեր ծերում սնափառը,
Շատ չի սիրում պահակ բառը,
Այդ թվում է խիստ հասարակ,
Վիրավորում փոքր-ինչ նրան)…
Բոլորն արդեն վաղուց գիտեն
Սովորույթը Դանել քեռու.
Անկեղծորեն և լրջորեն
Այն գործին է սիրահարվում,
Որ նրան է հանձնարարվում:
Գոմապա՞հն է – գոմն է դառնում
Ամեն ինչից կարևորը.
Այգի՞ն, բոստա՞նն է պահպանում՝
Այս անգամ էլ ալևորը
Դրանով է հպարտանում…
Հասկանալի, պարզ է կարծեմ,
Որ բնավ էլ կարևոր չէ,
Թե, օրինակ, անցած տարի
Տեսանկյունից հանդապահի
Նա ինչպես է վերաբերվել
Ասենք թեկուզ մեղվանոցին:
-Մեղուն որն է, տո՛ վա՛զ անցիր
Երբ հաց, ցորեն կա աշխարհում,-
Այսպես կասեր Դանել քեռին
Անցած ամառ: Բայց այս տարի…
Որտեղ նստի ու վեր կենա՝
Մեռած բան է – խոսք կբացի
Մեղվից, մեղրից, մեղվանոցից,
Առարկես էլ՝ կտաքանա,

Չառարկես էլ՝ կբարկանա,
Անհաշտ մեկի հետ կվիճի,
Ջանք կթափի, կապացուցի
Օգուտները մեղվանոցի…
Ու սիրում է նա հատկապես
Դարբնի հետ իր ուժը չափել:
Երկու ծերուկ, և թարսի պես՝
Մեկը անչափ դյուրահավատ,
Ե՛վ սնափառ, և՛ միամիտ,
Մյուսն անչափ կասկածամիտ,
Խստաբարո և անհավատ,
Հիսուն-վաթսուն տարի ահա
Միշտ վիճում են, խայթում իրար,
Բայց և այնպես – ի՞նչ իմանաս,
Հենց միգուցե դրա համար,
Մտերիմ են մնում կրկին
Ու կոլխոզում և ոչ մեկից
Այն հաճույքը չեն ստանում,
Ինչ զգում են, երբ որ նրանք
Իրար հետ են զրույց անում:
Շատ են սիրում նրանք խոսել
Նամանավանդ կոմունիզիմից:
-Չէ՛, չենք կարող դու է՛լ, ես է՛լ
Էդ օրհնված օրին հասնել:
Մահը կգա մեզ կճզմի,-
Իր կասկածն է հայտնում ուստան:
-Ի՛նչ ես խոսում, այ անաստված,-
Տաքանում է Դանել քեռին:-
Փառ է իջել քո աչքերի՞ն:
Մի դու հապա շուրջդ նայիր,

Մի մտիկ տուր մեր աշխարհին:
Եվ մեր քեռին շիկնած բոցից,
Խոսքի շայրը բերո՛ւմ-բերո՛ւմ,
Եվ ինչպես միշտ այս սեզոնում՝
Հասցընում է մեղվանոցին.
-Թե լինեիր դու մեղվապահ,
Կտեսնեիր ավելի պարզ…
-Լա՛վ, էդ գիտե՛նք, գիտե՛նք, Դանե՛լ,
Բավական է գլուխ տանես,-
Ընդհատում է ուստան նրան:
Եվ մուրճն իջնում, ելնում է վեր,
Բորբոքվում է անվերջ քուրան
Ու բորբոքում ասես նաև
Ներողամիտ Դանել քեռուն,
Որ կոկորդն է հազիվ քերում,
Եվ ժպտալով ինքնավայել
(Չի պատահել կարծես ոչինչ),
Կամենում է նորից խոսել,
Նորից խոսել… մեղվանոցից,-
Թե՝ իբր այնտեղ, մեղվանոցում
Շատ կարևոր հարց են լուծում,
Թե՝ այս շաբաթ –խոսքին նայիր -
Փեթակները կոլխոզային
Նա մաքրել է ամերիկյան՝
«Բուրժուական» էդ փտախտից,
Թե՝ էլ մեղվին վտանգ չկա,
Մեղվաբերքն էլ իրենց բախտից
Ծով կլինի ամեն տարի:
Իսկ թե ծով է բերք ու բարիք՝
Ասել է, թե իր ոտքերով

Կոմունիզմը մոտ է գալիս:
Սակայն ուստան այս անգամ է՛լ
Նրան խոսել հո չի տալիս.
-Դու պալատի՞ց խոսիր, Դանե՛լ,
Մոռացե՞լ ես, թե դրանով
Ինչքա՞ն ես դու հոգից հանել:
Հիմա ինչո՞ւ վազ ես անցնում:
-Էհ, կխոսեմ ես հիմա էլ.
Ո՞վ ասաց, թե վազ եմ անցնում,-
Եվ մի փոքր շփոթվելով
Իր ճակատն է շփում ձեռով:
Ախր ուստան չի մոռացել,
Թե որքա՛ն են նրանք վիճել
Այդ առիթով: Ինքն ասում էր.
-«Կամաց՝ բայց շատ գնա», ախպե՛ր…
-Ախր կամաց ո՞ւր ես գնում,
Ջոքանչիդ տո՞ւն, թե՞ կոմունիզմ,-
Բորբոքվում էր Դանել քեռին
Եվ միանում ամեն կողմից
Վաչագանին ու Թորգոմին…
Շփոթվում է քեռին հիմա
Միտ բերելով, որ Թորգոմին
Նոր ակումբի շենքի համար
Երեկ գիշեր լավ խայթեցին,
Եվ ուզում է շրջանցելով
Խոսքը բերել մեղվանոցին,
Բայց զգալով, որ չի կարող,
Եվ որ ուստան նեղն է ձգել,
Աշխատում է որևէ կերպ,
Ինչ-որ ծուռտիկ ճանապարհով

Փեշն ազատել, իրեն փրկել:
-Վա՜յ, շատախո՛ս, դու ջո՛ւր դառնաս,
Ո՞նց մոռացար,- ասում է նա
Եվ մազերն է ուզում ձգել
(Ու կձգեր, թե ունենար),-
Մեղվանոցից պետք է, ուստա՛,
Դու հենց հիմա սարքես ու տաս
Երեսուն հատ մայրավանդակ:
Դե շո՛ւտ, ուստա՛,
Ձեռքի՛դ մատաղ…
Իսկ ուստայի թավ բեղերում
Չարաճճի մի քմծիծաղ
Ջբոսնում է իրեն համար:
Պարզ է տեսնում ուստան հիմա.
Սուտ է ասում Դանել քեռին,
Որ ազատվի նրա ձեռից…